ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Կենսաբանական գիտ. XIII, № 2, 1960 Биологические науки

ՀԱՄԱՌՈՏ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Գ. Դ. ԱՎԱԳՅԱՆ

ՓՇԱՏԵՆՈՒ (ELAEAGNUS L.) ՆՈՐ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Փշատենին (Elaeagnus) *Հայաստանում տարածված է գլխավորապես Արաքսի հովտում, մասամբ էլ Ալավերդու, Ազիզբեկովի, Եղեգնաձորի, Իջևանի և այլ շրջաններում։ Այն, որպես պտղատու և դեկորատիվ ծառատեսակ, վերջին տարիների ընթացքում մեծ քանակությամբ տնկվել է Արաքսի հովտում՝ հատկապես Հոկտեմբերյանի, Արտաշատի, Վեդու, Էջմիածնի և Շահումյանի շրջաններում։*

Փշատենին, որպես պտղատու կուլտուրա, թեև բնակչությանը հայտնի է հին ժամանակներից, սակայն ինչպես նրա հիվանդությունները, այնպես էլ վնասատուները ամբողջությամբ ուսումնասիրված չեն։

Վնասատուների կապակցությամբ՝ Գրեչկինը նշում է, որ փշատենու վնասատուները ոչ միայն ուսումնասիրված չեն, այլև նրանց տեսակային կազմը պարզված չէ։ Փշատենու վնասատուներից մինչև այժմ հայտնի են Հայաստանից ավելի քան 34, իսկ ընդամենը 79 տեսակ։

Մեր լրացուցիչ դիտողությունների շնորհիվ պարզվել է, որ Հայաստանի պայմաններում տարբեր խմբերի միջատների տեսակները նույնպես հանդիսանում են փշատենու վնասատուներ, որոնք հավաքված են հիմնականում Արաքսի հովտում փշատենու վրայից և, որպես այդպիսիք, ցույց են տրվում առաջին անգամ։*

Բզեզների մի մասը որոշել է Ս. Մ. Խնձորյանը, իսկ տերևալվիկների տեսակը՝ Ս. Լոգինովան։

ՏԵՐԵՎԱԼՎԻԿՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՐԳ PSYLLODEA

Տերևալվիկների ընտանիք—*Psyllidae*

Trioza magnisetosa Lag.

Մեզ հանդիպել է Երևանի շրջակայքում, Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Շահումյանի, Կոտայքի և Արտաշատի շրջաններում։ Հասուն միջատը նստում է փշատենու տերևների վերին երեսի վրա, հատկապես շոգ ժամերին աշխատում է թաքնվել տերևի ստվերոտ մասերում։ Նրա թրթուրը և նիմֆան ապրում են գլխավորապես տերևի ստորին երեսի վրա. ընդ որում թրթուրի հասցրած վնասի պատճառով տերևի ստորին երեսի վնասված մասի ներհրկման հետևանքով առաջանում է գոգ կամ փոսիկ, իսկ հակառակ կողմում, այսինքն տերևի վերին երեսին՝ գալլանման ուռույց։

Այդ երևույթն ավելի շատ նկատվում է երիտասարդ ճյուղերի վրա, որոնց նույնիսկ տերևները գանգրոտ են լինում։ Այդպիսի գանգրոտություն ավելի հաճախ նկատվում է փշատենու երիտասարդ տնկարկներում։

* В. Н. Гречкин. Очерки по биологии вредителей леса. Москов. общ. испыт. природы. 1—149, 1951.

Հավանական է, որ որոշ տարիներում այս տեսակները մասսայական բնույթ է կրում։ Օրինակ, նման երևույթ մեզ հաջողվել է դիտել 1954 թ. ընթացքում՝ Եղվարդի և Երևանի շրջակայքում, Բուսաբանական այգում՝ 18–19.VI, Արտաշատում 21.VI, Քանաքեռում 22.VI և Հոկտեմբերյանում 23.VII։ Այդ ժամանակ տեսակները գտնվում էր հասուն հասակում և ըստ երևույթին տեղի էր ունեցել արդեն նրա մասսայական թռիչքը։

Պետք է ենթադրել, որ նրա մասսայական զարգացման տարիներին կարող է զգալի վնաս հասցնել։

Կարծրաթևների կամ բզեզների կարգ — Coleoptera

Թերթիկաբեղիկների ընտանիք — *Scarabaeidae*

Homaloplia spireae Pall

Մեզ պատահել է Բուսաբանական այգում 19. VI. 1954 թ., հազվադեպ է։ Աննշան չափով վնասում է տերևներին։

Ոսկյա բրոնզաբզեզ — Cetonia aurata L.

Հանդիպում է գրեթե ամենուրեք։ Մասսայական ձևով հանդես է գալիս մայիս-հունիս ամիսների ընթացքում, փշատենու ծաղկման շրջանում։ Մեզ հաճախակի պատահել է Երևանի շրջակայքում։ Վնասում է ծաղիկին։

Հունգարական բրոնզաբզեզ — Potosia hungarica Hbst.

Հանդիպում է մայիս-հունիս ամիսների ընթացքում։ Մեզ պատահել է Այգր-լճի շրջակայքում և Արշալույսի այգիներում։ Աննշան չափով վնասում է ծաղիկին։

Զոլավորիկ բրոնզաբզեզ — Oxythyrea cinctella Schaum

Հանդիպում է ամենուրեք խմբերով՝ պտղատու կուլտուրաների, դեկորատիվ ծառերի ու թփերի ծաղիկների վրա։ Մենք փշատենու ծաղիկների վրայից հավաքել ենք 1954 թ. հունիսի 5-ին։ Վնասում է ծաղիկին։

Չրխկանների ընտանիք — *Elateridae*

Synaptus filiformis F.

Հանդիպում է գրեթե ամենուրեք։ 1954 թ. հունիսի 19-ին պատահել ենք Բուսաբանական այգում փշատենու տերևի վերին երեսի վրա, հանգիստ նստած վիճակում. Նկատվում էր, որ տերևի երեսը թարմ կերված էր։ Աննշան չափով վնասում է տերևին։

Ոսկեբզեզների ընտանիք — *Buprestidae*

Agrilus obscuricollis Kiesw.

Հայաստանում մեզ հանդիպել է Երևանի մոտակա վայրերում՝ Ջրվեժում, Բուսաբանական այգում, ինչպես նաև Հոկտեմբերյանում։ Մենք նրան հավաքել ենք Արտաշատի այգիներում փշատենու վրայից։ Մոտենալիս իսկույն թռչում է, խիստ արագաշարժ է, դժվար որսացվող։ Նրա թրթուրի

վնասը ուժեղ կերպով արտահայտվում է մատղաշ և երիտասարդ ճյուղերի վրա։ Հիմք ընդունելով ճյուղերի կերվածքները՝ կարելի է ենթադրել, որ թրթուրը գոլի վնաս է հասցնում փշատենու ծառերին առանձնապես չոր վայրերում։

Ոռածկակերների ընտանիք—*Cruptophagidae*

Վեցանկյունանի ծածկակեր—Cryptophagus hexagonalis Küst.

Հանդիպում է դրեթե ամենուրեք։ Մենք պատահել է Երևանի շրջակայքում 1934 թ. հունիսի 3-ին։ Նատ փոքրիկ է, մտնում է ծաղկի խորքը մինչև սերմնարանի հիմքը։ Կրծելու հետևանքով վնասում է թե՛ վարսանդին և թե՛ առէջքներին, ընդհանրապես ծաղկի ներքին օրգաններին։ Վնասում է ծաղկին։

Ծաղկափշիկների ընտանիք – *Alleculidae*

Omophlus flavipennis Küst.

Հանդիպում է ամենուրեք, որտեղ փշատենի կա, հատկապես մայիս-հունիս ամիսներին։ Դիտողությունները ցույց են տալիս, որ ամբողջ ծաղկման ժամանակաշրջանում այդ բզեզը մասսայական ձևով հարձակվում է փշատենու վրա։ Նա կրծում է բաժակակալը, մտնելով ծաղկի խորքը։ Վնասում է միաժամանակ վարսանդին և առէջքներին։ Հասցրած վնասի հետևանքով վարակված վայրերում տեղի է ունենում մասսայական ծաղկաթափություն։

Omophlus pilicollis Mén.

Հանդիպում է դրեթե ամենուրեք, որտեղ փշատենի կա։ 1934 թ. հունիսին փշատենու վրա հաճախակի դիտել ենք Երևանի շրջակայքում, Նորքի լանջերում, իսկ հունիսի 18-ին հավաքել ենք Բուսաբանական այգում։ Գաղաս չափով վնասում է ծաղկին։

Տերևակների ընտանիք—*Chrysomelidae*

Labidostomis elegans Lep.

Հանդիպել է փշատենու և չիչխանի վրա։ Հավաքել ենք Հոկտեմբերյանի դաշտապաշտպան շերտերում 29. VI 1934 թ.։ Աննշան չափով վնասում է տերևներին։

Labidostomis peregrina Ws.

Երևանի շրջակայքից հավաքել ենք 5. VI 1934 թ.։ Մենք նրան դիտել ենք վնասատվության ժամանակ տերևները կրծելիս։ Հավանական է, որ որոշ չափով վնասում է նաև ծաղիկներին։

Longitarsus succineus Foudr.

Որսացել ենք Հոկտեմբերյանի շրջանում, 4-րդ սովխոզի տերիտորիայում, փշատենու վրա՝ 1934 թ. հունիսի 23-ին։ Աննշան չափով վնասում է տերևներին։

Նիկարակնճիթների ընտանիք—*Curculionidae*

Otiorrhynchus ovalipennis Bol.

Հանդիպում է ամենուրեք։ Կենդանաբանական այգում փշատենու վրայից հավաքել ենք 1951 թ. հունիսի 17-ին։ Բզեզի վնասատվությունը դիտել ենք տերևները կրծելիս։ Այդ նույն ժամանակ բոլոր կենդանաբանական այգում ուժեղ կերպով վնասում էր նաև ընկուզենու տերևներին։

Polydrosus inustus Germ.

Հանդիպել է Վեդու շրջանում՝ Արարատ գյուղի այգիներում, փշատենու վրա՝ 1957 թ. մայիսի 9-ին։ Բզեզը սնվում է տերևներով և բողբոջներով։ Վնասում է աննշան չափով։

Chlochius immeritus Boh.

Մասսայական ձևով հանդիպել է Արտաշատի շրջանի գաբրատապտղատու շերտերում, փշատենու վրա։ Հավաքել ենք 17.V 1951 թ.։ Բզեզն ասեղնապես ապրում է արմատավզի և բնի մասերի ճեղքերի վրա, ուժեղ կերպով վնասելով տերևներին։

Այդ նույն ժամանակ տեղի է ունենում մասսայական զուգավորում։ Վնասը զգալի է երիտասարդ շիվերի մոտ։

Rhyncolus culinaris Germ.

Հանդիպել է Վեդու շրջանի Արարատ գյուղի այգիներում, փշատենու վրա՝ 9.V 1957 թ.։ Զարգացումը տեղի է ունենում փայտանյութի մեջ։ Վնասն երբեմն զգալի է լինում։

Կեղևակիրների ընտանիք — *Ipidae*

Խնձորենու կեղևակեր — Scolytus mali Bechst.

Մեզ հայտնի է, ասավելապես, Գառնիի շրջակայքից։ Ապրում է փշատենու կեղևի մեջ և նրա տակ։ Ս. Մ. Ենձորյանի բանավոր ավյալների համաձայն, այս տեսակը մասսայական բնույթ է կրում և շոշափելի վնաս է պատճառում փշատենու կեղևին ու բնափայտին։

Թիթեռնիկների կամ թիթեռների կարգ — Lepidoptera

Ընտանիք — *Gelechiidae*

Մրգի ծերտավոր ցեց — Anarsia lineatella Z.

Այս ցեցը մինչև այժմ հայտնի է որպես դեղձենու, ծիրանենու և փշատենու ընձյուղների լուրջ վնասատու, սակայն 1951 թվականին, Լրսկուրսիաների ժամանակ, նորքի շրջակայքում փշատենու տնկարկներում մենք նկատեցինք փշատենու ծաղկի ուժեղ վարակվածություն։ Վարակված ծաղիկները հավաքելու և արհեստական պայմաններում թրթուրը դաստիարակելու միջոցով ստացվել է հատուկ միջատ։ Հետազոտում պարզվել է, որ դա մրգի շերտավոր ցեցն է։ Վարակվածությունը և վնասատվությունը մասսայական ձևով արտահայտվում էին հատկապես երիտասարդ տնկարկներում, մի քանի տարեկան ծառերի վրա։ Այդպիսով, պարզվում է, որ այդ ցեցի թրթուրը վնասում է ոչ միայն ընձյուղներին, այլև ծաղիկներին։

Գեղմաքիթեռների ընտանիք—*Liparidae*

Leucanitis caucasica Kol.

Հազվադեպ հանդիպող տեսակներից մեկն է։ 1954 թ. հունիսի 19-ին, Երևանի շրջակայքում փշատենու վրայից մեր վերցրած թրթուրը արհեստական պայմաններում հարսնյակավորվեց նույն թվականի հունիսի 25—28-ին, իսկ թիթեռի թռիչքը տեղի ունեցավ օգոստոսի 9-ին։ Մեկ թիթեռ Խոսրովի անտառում փշատենու վրայից բռնել ենք նույն թվականի հուլիսի 6-ին և մեկ հատանմուշ էլ՝ 1955 թ. օգոստոսի 26-ին Երևանում, որսացել ենք արհեստական լույսով։ Վնասում է տերևներին։

Г. Д. АВАКЯН

НОВЫЕ ВРЕДИТЕЛИ ЛОХА (ELAEAGNUS L.) ИЗ АРМЕНИИ

Проведенные за последние годы наблюдения показали, что кроме 34 видов, известных в условиях Армении, есть еще 20 представителей разных групп, впервые отмечаемых в качестве вредителей лоха. Эти виды приведены в тексте статьи.

Вместе с ними в настоящее время известно 99 видов насекомых—вредителей лоха, из которых 54 встречаются в Армении.

Несомненно, дальнейшие исследования дополнят перечень насекомых вредителей лоха, причем будут обнаружены новые вредители не только в пределах Армении, но и для Советского Союза.